ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1962 Общественные науки

Վ. Ա. Դիլոյան

ԼԱԶԱՐՅԱՆՆԵՐԻ ԼԵՌՆԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(XVIII դար)

Լազարյանների լեռնարդյունաբերական տնտեսության առաջացումը հետևանք էր կապիտալի խոշոր կուտակման Նոր-Ջուղայից Ռուսաստան դաղթած այդ առևտրական տան ձեռքում։ Լազարյանները չբավարարվեցին միայն Ցրյանովոյի մետաքսագործական ֆաբրիկան դնելով։ Դեռևս XVIII դարի 60-ական թվականներին նրանց մեջ հետաքրքրություն է առաջ գալիս դեպի լեռնարդյունաբերությունը, որն այդ ժամանակաշրջանում ծաղկումն էր ապրում։ Ինչպես հայտնի է, XVIII դարի կեսերին թուջի և երկաթի արտադրությամբ Ռուսաստանն առաջ էր նույնիսկ Անգլիայից։ Իհարկե, Ռուսաստանի լեռնարդյունաբերության սիրտը Ուրալն էր, որտեղ Պյոտր I-ի ժամանակներից մեծ թափով ծավալվեց լեռնարդյունաբերական ձեռնարկությունների շինարարությունը։ Խոսելով Ուրալի և XVIII դարում նրա բարգավաճման մասին, Վ. Ի. Լենինը իր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» նշանավոր աշխատության մեջ հետևյալն է գրում.

«Մինչև վերջին ժամանակները կենտրոնական Ռուսաստանից սաստիկ բաժանված մի շրջան կազմելով՝ Ուրալը միաժամանակ արդյունաբերության յուրահատուկ կառուցվածք ունի։ Ուրալում վաղուց ի վեր «աշխատանքի կազմակերպման» հիմքում ճորտատիրական իրավունքն է դրված եղել, որը մինչև այժմ էլ, մինչև 19-րդ դարի վերջը, հանքագործարանային կենցաղի շատ կարևոր կողմերում իրեն զգալ է տալիս։ Ճորտատիրական իրավունքն իր ժամանակին հիմք էր ծառայում Ուրալի բարձր բարգավաճման ու նրա գերիշխանության համար ոչ միայն Ռուսաստանում, այլ մասամբ նաև Եվրոպայում»[1]։

Ահա մի այդպիսի ժամանակաշրջանում, երբ Ուրալը բարգավաճում էր, Լազարյանների մոտ խիստ մեծ հետաքրքրություն առաջ եկավ դեպի լեռնարդյունաբերությունը, դեպի արդյունաբերական շահույթի ավելի բարձր և հաստատուն նորման։ Այդ մի ժամանակաշրջան էր, երբ լեռնարդյունաբերությունը, խոշոր վաճառականների հետ մեկտեղ, դեպի իրեն էր գրավում ռուսական առհմիկ ազնվականության ներկայացուցիչներին՝ Շուվալովներին, Վորոնցովներին, Գոլիցիններին և այլն։

Կապիտալը չէր, որ արգելք էր հանդիսանում Լազարյաններին՝ մտնելու ապրանքային արտադրության ոլորտը։ Նրանց համար մեծ խոչընդոտ էր 1762 թ. մարտի 29-ի կայսերական հրամանագիրը, որի համաձայն հասարակ ծագման տեր մարդիկ զրկվում էին ֆաբրիկաների համար գյուղեր և ճորտ գյուղացիներ դնելու, այսինքն ֆաբրիկաները աշխատուժով ապահովելու հնարավորությունից։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, III հատ., 4-րդ հրատ., էջ 626—627։

Լազարյանները առաջին անգամ լեռնարդյունաբերության ասպարեզ ոտք դրեցին ոչ որպես անմիջական արդյունաբերողներ և գործարանատերեր, այլ որպես կապալառուներ։ 1771 թ. նրանք 6 տարով, յուրաքանչյուր տարին 40 հազար ռուբլով, կապալով վերցրին դեռահասակ Ա. Ս. Ստրոգանովի Բիլիմբաևոյի, Դոմրյանսկի և Օշերսկի պղնձաձուլական և երկաթաձուլական գործարանները, ինչպես նաև Նովոյե Ուսոլյեի աղահանքերը։ Ա. Ս. Ստրոգանովի կալվածքը գործարաններով հանդերձ թաղված էր պարտքերի մեջ և Լազարյանների հանդես գալն ու նոր կապիտալների ներդրումը փրկեցին այդ կալվածքը կորուստից։ Այս երևույթը խոսում է այն մասին, որ արդեն XVIII դարի երրորդ քառորդում Ստրոգանովների լեռնարդյունաբերական ձեռնարկություններում ճգնաժամ էր սկսվել, որից դուրս գալու ուղին նրանք տեսնում էին ձեռնարկությունները վարձակալման տալու կամ վաճառելու մեջ։

1771—1776 թվականներին Լազարյանները հնարավորություն ստացան հիմնովին ծանոթանալու լեռնարդյունաբերությանը և պատրաստվելու լեռնարդյունաբերողների նոր դերին։

Լազարյանների համար գործունեության լայն ասպարեզ բացվեց այն բանից հետո, երբ 1774 թ. սենատական հրամանագրի համաձայն նրանք դարձան «ռուսական ազնվականներ»[2]։ Այդ հրամանագրով նրանք հնարավորություն էին ստանում իրենց ունեցած կապիտալները ներդնել ապրանքային արտադրության մեջ, վերածվել արդյունաբերողների։ Ազնվականություն ստանալն էր, որ նրանց հնարավորություն պիտի տար դառնալ արդյունաբերողներ։ Լազարյանների օրինակը եզակի չէր այդ շրջանում։ Ուստի հասկանալի էր ազնվականության շահերի պաշտպան իշխան Մ. Մ. Շչերբատովի վրդովմունքը այդ առթիվ։ Նա «Размышления о ущербе торговли, происходящем выхождением великого числа купцов в дворяне и офицеры» հոդվածում իր երկյուղը հայտնելով, որ հետզհետե ավելի ու ավելի մեծ քանակությամբ կապիտալներ են դուրս գալիս առևտրական շրջանառության ոլորտից, հետևյալն էր գրում մասնավորապես Հովհաննես Լազարյանի մասին. «Իվան Լազարևիչ Լազարև, հայ, այն ժամանակ շուրջ 500000 ռուբլու կապիտալ ուներ, ազնվականության շարքերն է ընդունված, իսկ հետագայում ոչ մի տեղ չծառայելով և հարստանալով միայն փողերի փոխադրությամբ, վարձատրվել է խորհրդականի աստիճանով»[3]։

Իրավացի չէր Շչերբատովը Հովհաննես Լազարյանի նկատմամբ իր մեղադրանքում։ Նա բոլորովին աչքաթող էր անում այն հանգամանքը, որ իր հսկա կապիտալների մի մասը հանելով առևտրական շրջանառության ոլորտից Լազարյանը ձեռնածալ չէր նստել, այլ այդ կապիտալները ներդրել էր ապրանքային արտադրության ոլորտը՝ ընդարձակելով ձեռնարկությունները։

Միանգամայն հասկանալի է, որ առևտրական կապիտալի ներկայացուցիչների ձգտումը ընկնել ազնվականության շարքերը, շատ բացորոշ արտահայտում էր այն խոր հակասությունը, որ ստեղծվել էր աստիճանաբար և աննկատելիորեն ձևավորվող կապիտալիստական արտադրահարաբերությունների և ֆեոդալական-ազնվապետական վերնաշենքի միջև։

Մի ժամանակ Ուրալում, հատկապես Պերմի նահանգում, մոնոպոլ ուժեղ

---

[2] ЦГАДА, ф. 1252, д. 1682, л. 102.

[3] «Сочинения князя М. М. Щербатова», т. I, СПб., 1896 г., стр. 623.

դիրքեր ունեցող Ստրոգանովների տնտեսությունն սկսել էր խոր ցնցումներ ապրել։ Ճորտերի անխնա կեղեքումը, ծայրահեղ անարտադրողական, նատուրալ ռենտայի վրա հենվող ճորտատիրական տնտեսությունը չէր ապահովում մայրաքաղաքների ճոխության մեջ տասնյակ հազարներ վատնող նրա տերերի պահանջները։ XVIII դարի երկրորդ կեսին Ստրոգանովները աստիճանաբար սկսում են վաճառել իրենց կալվածքները։ Պերմում հայտնվում է սենատոր Վսեվոլոժսկին, որ Ստրոգանովներից գնում է նրանց կալվածքների մի մասը, իսկ մյուս մասերից բաժինքի կարգով որպես սեփականություն են անցնում Մ. Մ. Գոլիցինին և Բ. Շախովսկոյին որոշ գործարաններ՝ հողերով հանդերձ։

1777 թ., Գ. Ն. Ստրոգանովի մահից հետո, նրա կալվածքներն ու գործարաններն անցան վերջինիս զարմիկ գեռահաս Ա. Ս. Ստրոգանովին և բարոն Ա. Ն. Ստրոգանովին։ Սրանց խնամակալները որոշեցին այն վաճառել Ա. Ս. Ստրոգանովի հորից ժառանգություն ստացած կալվածքի պարտքերը վճարելու համար։ Սկզբում վաճառվող կալվածքը գնելու հավակնություններ հայտնեցին գործարանատեր Խլերնիկովը և Հովհաննես Լազարյանը[4]։

Ի վերջո Հովհաննես Լազարյանին հաջողվում է գնել այդ կալվածքը 450 հազար ռուբլով։ Այսպիսով նա տեր էր դառնում Կամայի վտակ Չերմոս գետի ափին կառուցված Չերմոսի պղնձաձուլական ու երկաթագործական գործարանին, որն ուներ վեց պղնձաձուլական վառարան, մեկ դոմնա, 10 գործող և 3 պահեստի մուրճ։ Լազարյանի ճորտերն են դառնում 7142 գյուղացիներ՝ իրենց կանանց ու երեխաների հետ միասին (ըստ երրորդ ռևիզիայի)[5]։

Իրականում սակայն գյուղացիների թիվը շատ ավելի պակաս էր։ «Լազարևին վաճառված 7142 շնչից նախորդ 15 տարիների ընթացքում որպես շարքից դուրս եկած ցույց էր տրված 3741 շունչ։ Այդ թվում զինվոր էր տրված 335 հոգի և փախուստի մեջ էր 733 հոգի։ Այդ նույն ժամանակաշրջանում ծնվել էր ընդամենը 2145 հոգի, մեռածների թիվը կազմում էր 2042 հոգի։ Ստացվում էր, որ կալվածքը 15 տարվա ընթացքում կորցրել էր գրեթե 1600 մարդ, կամ բնակչության 22%-ը, որից 10%-ը գտնվում էր փախուստի մեջ։ Այս տվյալները որոշակի ցույց են տալիս, թե ինչպիսի դրության մեջ էին գտնվում Ստրոգանովների ճորտերը»[6]։

Այսպիսով, կալվածքը ձեռք բերելու առաջին իսկ օրերից, Հովհաննես Լազարյանը կանգնում էր մի շարք դժվարին խնդիրների առջև, որոնք իրենց լուծումն էին պահանջում։ Եթե նա ցանկանում էր լավագույն կերպով օգտագործել տնտեսության հնարավորությունները, արտադրությունը ընդարձակելու և ձեռնարկությունից ավելի բարձր շահույթ ստանալու համար, ապա պետք է ձեռք առներ որոշ միջոցառումներ։ Եվ, իսկապես, նա անմիջապես ձեռնամուխ եղավ որոշ արմատական փոփոխությունների, որոնց մեջ որոշակիորեն արտահայտվում էին կապիտալիզմի զարգացման տենդենցները, ինչպես նաև Հ. Լազարյանին բնորոշող հայացքները։

Հովհաննես Լազարյանի համար արժեքազրկվում էին կալվածատիրական տնտեսությունից ստացվող եկամուտները՝ ֆեոդալական ռենտան, քանի որ նա չափից դուրս շահագրգռված էր երկաթի արտադրությամբ և ձգտում էր

[4] ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 161, л. 116 об.

[5] ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 19, лл. 28—33.

[6] Н. Н. Новокрещенных, Чермозский завод, его прошлое и настоящее и летопись событий. СПб., 1889 г., стр. 8.

գյուղացիներին գլխովին օգտագործել գործարանային օժանդակ աշխատանքներում։

Այդ նպատակով նա Նովոուսոլսկի իր գլխավոր վարչությունից պահանջեց, որպեսզի բոլոր գյուղերից ներկայացուցիչներ ուղարկվեն Պետերբուրգ՝ համատեղ կարգով քննարկելու աշխատանքի բաժանման և բահրայի բաշխման նախահաշիվները։

Այս խորհրդակցության հիման վրա նա կարգադրեց իր հավատարմատարներ Մ. Օհանջանովին և Յա. Իպանովին նախ և առաջ բոլոր գյուղացիների վրա նշանակել միմիայն դրամական բահրա։ Իր մի նամակում նա հետևյալ կարգադրություններն է անում.

«...1. Իմ բոլոր վոտչինային գյուղացիներին տերունական վարելահողերի վրա աշխատելուց ազատել, իսկ հողերը բաժանել չունևորներին և կամ դնել իրենց՝ գյուղացիների տրամադրության տակ, միայն դրա հետ մեկտեղ խստիվ հետևել, որպեսզի աղքատները և փախուստից վերադարձածները չտուժեն, այլ բոլորը հավասար բավարարություն ստանան...

2. Բոլոր գոմերը համաձայն իմ նախկին կարգադրությունների վերացվել են և անասունները բաժանվել են գյուղացիներին, բացի Կիլասովո գյուղից։ Այժմ սրանով կարգադրում եմ, որպեսզի Կիլասովոյում ինչպես ձիաբուծարանը, այնպես էլ գոմանոցները վերացվեն, իսկ ձիերից, որքան հնարավոր կլինի ջոկել արտադրական աշխատանքների համար, վերցնել. մնացած ձիերը, որոնք հնարավոր կլինի օգտագործել գյուղացիական տնտեսության մեջ բաժանել փողով կամ վաճառել՝ կանխիկ դրամով իմ գյուղացիներին, որպեսզի դրանք չընկնեն օտար ձեռքեր... Նույնպես և եղջյուրավոր խոշոր անասունները բաժանել իմ չունևոր գյուղացիներին աշխատավճարով, իսկ իմոնցից ով կկամենա գնել նաղդ փողով՝ վաճառել այդպիսիներին։

3. Բոլոր գյուղերում, ինչպես և Կիլասովոյում եղած բոլոր իմ խոտհարքները տալիս եմ գյուղացիներին, ըստ տեղի հարմարության հավասարեցնելով. միայն Կիլասովոյի ձիաբուծարանին պատկանող (խոտհարքներից) լավերը և հարմարավետները թողնել, որպեսզի ամեն տարի հավաքեն 15—18 հազար փութ խոտ և տանեն Նավահանգիստ ու Կիզելի հանքավայրերը։

...5. Բոլոր բնակավայրերից հաստիքով նախատեսված կանեփը, մեղրը և մեղրամոմը, ինչպես նաև այլ մանրուքներ չհավաքել և սպասել իմ կողմից հարկ եղած քննարկմանը և եկամուտների մասին արվելիք կարգադրությանը։

...7. Ինչքան որ տերունական վայրերում մեղվափեթակներ կան, բոլորը անվճար տալ գյուղացիներին[7]։

Այնուհետև, այդ նույն կարգադրության 9-րդ կետում նշվում էր, որ գյուղացիները 3 և ավելի ամիս ժամանակ են կորցնում հանքավայրերից երկաթաքարը նավահանգիստ տեղափոխելու համար, ընդ որում ժամանակի մեծ մասը գյուղացիները կորցնում էին տուն գնալու և հացի ու անասնակերի պաշարները լրացնելու համար։ Այդ թերությունը վերացնելու նպատակով Լազարյանը առաջարկում էր հանքավայրերում և Նավահանգստում 500 ձիու համար պատրաստել խոտի և վարսակի պաշարներ, այնպես որ գյուղացիները մինչև երկաթաքարի տեղափոխման ավարտը իրենց տները չվերադառնային պաշարները նորոգելու և ամբողջ աշխատանքը կարողանային ավարտել 1,5 ամսում[8]։

[7] ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 32, лл. 74—77.

[8] Նույն տեղում, л. 76 об.

Այսպիսով, վերացվում էին կալվածատիրական վարելահողերը, կալվածատիրոջը տրվող բնամթերքային պարհակները, նրա անասունները և ձիերի որոշ մասը վաճառվում էին գյուղացիներին։ Ազատվելով կալվածատիրոջ վարելահողերի վրա կատարվող աշխատանքներից գյուղացիները՝ Լազարյանի կարծիքով, ավելի շատ ժամանակ կունենային նվիրելու գործարանային օժանդակ աշխատանքներին, որով և հնարավորություն կստեղծվեր ավելացնելու արտադրվող երկաթի քանակը, որովհետև Լազարյանի նպատակն էր «հանգուցյալ բարոն Գրիգոր Նիկոլաևիչի մասի տիրապետությունը ստանձնելուց հետո... գործարանները հասցնել լավագույն դրության ու կարգուկանոնի, որպեսզի առանց դժվարության, գուցե և դյուրին կերպով, հնարավոր լինի թուջի հալումը և երկաթի ձուլումը ներկայիս համեմատությամբ ավելացնելով առավելագույն օգուտ ստանալ...»[9]։

Ակնհայտ է, որ հակառակ հայտնված որոշ կարծիքների, մասնավորապես պրոֆ. Ն. Ռուբինշտեյնի կողմից, գործարանային արտադրությունը XVIII դարում չէր հանդիսանում ճորտատիրական տնտեսության հավելուկը. այլ, ինչպես ցույց է տալիս ներկա դեպքում Հովհաննես Լազարյանի տնտեսության օրինակը, ուշադրության կենտրոնում էր գործարանային արտադրությունը։ Վերջինիս հետաքրքրում էր ոչ թե ֆեոդալական ռենտայի ստացումը, այլ ճորտերի աշխատանքը գործարանային տնտեսության մեջ կիրառելու ճանապարհով հավելյալ արժեքի ստեղծումը և յուրացումը։ Մեր այդ տեսակետը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ Կիզելի ու Պոլազնինոյի գործարանները կառուցելուց հետո Հովհաննես Լազարյանը այնտեղ տեղափոխեց բավական մեծ թվով ճորտ գյուղացիներ, որոնք հարկադրված էին հիմնովին կտրել գյուղատնտեսության հետ ունեցած իրենց կապերը և դառնալ գործարանային բանվորներ։ Կալվածատեր-գործարանատերը նրանցից այժմ ստանում էր ոչ թե բահրա, այլ հավելյալ աշխատաժամանակում ստեղծված արդյունքը։

Գ. Ն. Ստրոգանովի կալվածքի գնումով Հովհաննես Լազարյանը դառնում էր ռուսական կալվածատեր-արդյունաբերողներից մեկը։ Նա գնել էր միայն մեկ գործարան՝ Չերմոսի գործարանը, որտեղ մինչև 1779 թ. թուջի տարեկան արտադրանքը կազմում էր 77,1 հազար փթից մինչև 116,4 հազար փութ, որից ստացվում էր երկաթ՝ 37,7 հազար փթից մինչև 51,4 հազար փութ[10]։

Համաձայն հավատարմատարներ Օհանջանովի և Ռպանովի կազմած տեղեկագրի (1778 թ. մայիս ամսին) Չերմոսի գործարանում, անմիջականորեն արտադրության պրոցեսում, ընդգրկված էին 229 հոգի, որոնցից 50 ձուլող վարպետներ, 87 ենթավարպետներ, 4 փուքսի վարպետներ, 2 փականագործներ, 14 դարբիններ, 2 ջրամբարտակի վարպետներ և այլն[11]։ Հետաքրքիր է, որ որակյալ բանվորները կազմում էին արտադրության մեջ աշխատող բանվորների մեծամասնությունը։

Ահա բանվորական այն կոնտինգենտը, որի վրա հենվելով Հովհաննես Լազարյանը մտադիր էր ավելացնել երկաթի արտադրությունը և ընդարձակել

---

[9] ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 32, л. 25.

[10] С. Г. Струмилин, История черной металлургии в СССР, т. I, М., 1954, стр. стр. 468 и 475.

[11] ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 25, лл. 162—189.

այն։ Բանվորական ուժի պակասը նա պետք է լրացներ միմիայն իրեն պատկանող ճորտ գյուղացիներից։ Իսկ այդ հարցը բավական մեծ բարդություններ հետ էր կապված, որովհետև, ինչպես կտեսնենք ստորև, գյուղացիները չէին ցանկանում կտրվել հողագործությունից, նրանց ամենևին էլ չէր հրապուրում գործարանային տաժանելի աշխատանքը։

Գործարանի հետ միասին Լազարյանը տեր էր դառնում նաև Նովոսուսոյսկում և Լենվենում գտնվող աղահանքերին։ Աղահանքերում աշխատում էին 99 բանվորներ, իսկ արական սեռին պատկանող երեխաների հետ մեկտեղ նրանց թիվը հասնում էր 177 մարդու[12]։

Գործարանի և աղահանքերի բանվորների ու ծառայողների թիվը արական սեռին պատկանող երեխաների հետ միասին 1778 թվականին՝ կալվածքի գրման տարում կազմում էր ընդամենը 893 հոգի[13]։ Այս հիմնական մասսայի վրա էր անմիջականորեն կառուցված արտադրական ողջ պրոցեսը։

Ինչ վերաբերում է ճորտ գյուղացիության մնացած զանգվածին, ապա նրանք ներգրավված էին արտադրությանը վերաբերող օժանդակ աշխատանքների՝ անտառահատման, փայտածխի ստացման ու փոխադրման, երկաթաքարի արդյունահանման ու տեղափոխման մեջ։ Անտառահատման աշխատանքներն սկսվում էին մարտ ամսից. այնուհետև, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին կտրված փայտը դարսում էին շեղջակույտերով, ծածկում հողով և սկսում այրել, որպեսզի փայտածուխ պատրաստեն։ Գյուղացիների պարտականության մեջ էր մտնում նաև երկաթահանքը Կիզելի հանքերից նավահանգիստ փոխադրելը, որտեղից գետով ուղարկում էին Զերմոսի գործարան։

Ինչպես արդեն տեսանք վերևում, փոխադրման աշխատանքները չափազանց շատ ժամանակ էին կորզում գյուղացիներից, քանի որ ինչպես անտառահատման վայրերը, այնպես էլ Կիզելի հանքերը բնակավայրերից մեծ հեռավորության վրա էին գտնվում և տեղ հասնելու համար նրանք ահագին տարածություն պիտի անցնեին։ Բացի դրանից, գյուղացիները պետք է տուն վերադառնային անասնակերի և իրենց իսկ սննդամթերքի պաշարները լրացնելու։ Այսպիսով, այն աշխատանքը, որ, համաձայն Հովհաննես Լազարյանի հաշվարկումների կարելի էր կատարել ընդամենը մեկ և կես ամսում, գյուղացիներից խլում էր 3—4 ամիս։ Այդ հանգամանքը չէր կարող բացասաբար չանդրադառնալ գյուղացիական տնտեսության վրա։ Եթե Լազարյանը նման դրությունից ելքը տեսնում էր հացի և անասնակերի վաճառքը գյուղացիներին աշխատանքի վայրում կազմակերպելու մեջ, ապա նրա հավատարմատար Օհանջանովը գտնում էր, որ գյուղացիները չեն համաձայնվի այդպիսի պայմաններով աշխատել, որովհետև նրանց համար ավելի ձեռնտու է իրենց ունեցած անասնակերով և հացով ծայրը ծայրին հասցնել, քան թե դնել կամ սանալ այն աշխատավարձի փոխարեն[14]։ Գյուղացիներին դա բոլորովին ձեռնտու չէր, քանի որ վարձատրությունը կհասներ մինիմումի, ուստի Լազարյանի վերոհիշյալ մտադրությունը այդպես էլ չիրականացավ։

Հովհաննես Լազարյանի մտածողության հիմնական առարկան աշխատանքի արտադրողականության բարձրացումն էր։ Դեռևս 1778 թ. դեկտեմբերի 13-ին նա հավատարմատարներ Օհանջանովին և Իպանովին գրում է, որ մի օրվա

12 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 25, лл. 162—189.

13 Նույն տեղում։

14 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 36, л. 60.

ընթացքում բանվորները ձուլում են 360—380 փութ երկաթ, այնինչ արտադրաքանակը պետք է հասցնել օրական մինչև 450—500 փթի, որպեսզի երկաթի տարեկան արտադրանքը կազմի շուրջ 100000 փութ։ Բայց դա չպետք է իրագործվեր սոսկ վարչական ստիպումների միջոցով և ի հաշիվ որակի, այլ այնպես, որ «վարպետները ջանան իրենց աշխատանքը հասցնել կատարելության... և հետևել, որպեսզի երկաթը բարձրորակ լինի»[15]։ Այդ իսկ նպատակով,—գրում էր Հ. Հաղարյանը,—«որ վարպետը ցույց կտա առավել ջանասիրություն և յավագույն ձուլման հետ մեկտեղ կտա նաև հավելյալ երկաթաձույլ և ավելի քիչ թուջ ու ածուխ կվատնի, այդպիսիներին, բացի սահմանված գնից, հատկապես պարգևատրել ըստ ձեր (հավատարմատարների— Վ. Դ.) հայեցողության և տեղյակ պահել ինձ նրանց մասին»[16]։ Ինչ վերաբերում էր «անփույթներին», ապա նախքան վարչական պատիժներ կիրառելը խորհուրդ էր տալիս համոզել, որպեսզի նրանք ավելի եռանդով և ջանասիրությամբ լծվեն գործի։

Գնելով Ստրոգանովների այդ կալվածքը, Հաղարյանը տրամադիր չէր սահմանափակվել դրանով։ Նա սկզբից ևեթ մտածում էր արտադրությունը ընդարձակել ոչ միայն ի հաշիվ ունեցածի, այլև վերջինիս բաղմապատկումով։ Այստեղից էլ այն մեծ ուշադրությունը, որ դարձնում էր նա բանվորական ուժի և առհասարակ ճորտերի թվի ավելացման վրա։ Նա ոչ միայն կարգադրում էր իր հավատարմատարներին, որ վոտչինաներում 16—17 տարեկանը անց չամուսնացած տղամարդիկ չլինեն և պարգևներ տալ ամուսնացողներին (5-ական ռուբլի նրանց, ովքեր կին կբերեն ուրիշ աղնվականների կալվածքներից և 2-ական ռուբլի՝ իր կալվածքի սահմաններում ամուսնացողներին)[17], այլև մեծ ուշադրություն էր դարձնում, որպեսզի վերադառնան փախուստի մեջ գտնվողները՝ խոստանալով վերադարձնել նրանց հողերը և ունեցվածքը։ Այդ էր պատճառը, որ նա խորհուրդ էր տալիս վերջ տալ այն պրակտիկային, երբ փախուստի մեջ գտնվողներին և վերադարձածներին անպայման զինվոր էին տալիս, լավ հասկանալով, որ դա ավելի էր դժվարացնում փախուստի մեջ գտնվող 300-ից ավելի գյուղացիների ետ վերադառնալը։ Հաղարյանը առաջարկում էր իր նախորդ կարգադրությունների համաձայն բավարարել փախուստից վերադարձածների կարիքները և որոշ արտոնություններ տալ, որպեսզի կարողանան բարելավել իրենց վիճակը[18]։ Փախստականներից նրանք, ովքեր վերադառնալուց հետո չէին ունենա ոչ տուն, ոչ անասուններ և ոչ էլ վարելահողեր, ետ պետք է ստանային իրենց նախկին սեփականության $^2/_3$ մասը, նույնիսկ եթե այն նրանց իսկ կամ նրանց ծնողների կողմից իր ժամանակին վաճառված էր եղել, պետք է նրանք ստանային նաև վարկ, պայմանով, որ վերադարձնեին իրենց տան և վարելահողի արժեքը այն անձանց, ում ժամանակին վաճառել էին իրենց տները և վարելահողերը[19]։

Նման վերաբերմունքը շատ շուտով իր արդյունքները տվեց։ Դեռ 1778 թ. դեկտեմբերին, կալվածքի գնման առաջին տարում, համաձայն Օհանջանովի և Իպանովի զեկուցագրի, արդեն բոլոր գյուղերում հայտնվել էին 200 հոգուց

15 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 21, л. 48 об.
16 Նույն տեղում։
17 Նույն տեղում, л. 26.
18 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 21, л. 86 об.
19 Նույն տեղում, л. 30.

ավելի փախստականներ և այդպիսիների վերադարձը դեռ շարունակվում էր»[20]։

Լազարյանը կարգադրել էր նաև իր գյուղացիներին անձնագրերով բաց չթողնել այլ վայրեր, ինչ որ կիրառվում էր մինչև այդ[21]։

Գյուղացիական տնտեսություններից շատերը չունեին ձիեր, որոնք անհրաժեշտ էին Պերմի նահանգի պայմաններում որպես քաշող ուժ ոչ միայն գյուղատնտեսական, այլև գործարանային օժանդակ աշխատանքների համար։ Նման տնտեսությունները ձիերով ապահովելու նպատակով Հովհաննես Լազարյանը 1778 թ. 3—5 տարի ժամանակով բաց թողեց 5000 ռուբլի վարկ[22]։

Ձիեր գնելու նպատակով 1778—1791 թվականները ընկած ժամանակամիջոցում Ռոժդեստվենսկոյե գյուղի գյուղացիներին տրվել է 1706 ռ. 70 կոպ., Յուրիչեսկոյե գյուղի գյուղացիներին՝ 1650 ռ. 66 $^3/_4$ կոպ., Կիլասովսկոյե գյուղի գյուղացիներին՝ 1187 ռ. 50 կոպ., Պերմսկոյե գյուղի գյուղացիներին՝ 1052 ռ. 16 $^1/_2$ կոպ.[23]։

Բացի վերոհիշյալ միջոցառումներից Լազարյանը ցանկանում էր Ջերմոսի գործարանում ունենալ մի մարդ, որը գլուխ հաներ երկաթի ձուլման և թուջի հալման պրոցեսներից և օժանդակեր իրեն այդ գործը լավագույն հիմքերի վրա դնելու։ Իր փնտրտուքների ժամանակ, 1779 թ. սկզբներին, նա Տուլայում հանդիպեց տեղի վաճառականներից Յակով Մակարովիչ Անտյուֆեևին, որը լավատեղյալ էր վերոհիշյալ գործին։ Վերջինս երկար հորդորանքներից հետո իր համաձայնությունը տվեց մեկնել Պերմ և Ջերմոսի գործարանի կառավարումը վերցնել իր ձեռքը։ Հովհաննես Լազարյանը խոստացավ նրա համար ստեղծել ամեն տեսակի դյուրություններ և կարգադրեց հավատարմատարներին տեղավորել վերջինիս տերունական տանը և ապահովել անհրաժեշտ պիտույքներով[24]։ Արդեն իր կյանքի 69 տարին բոլորած Անտյուֆեևը մեկնեց Ջերմոս իր որդի Յակովի հետ միասին։

Անտյուֆեևի առջև դրված առաջնահերթ խնդիրը նոր դոմնայի կառուցումն էր, ընդ որում դրա կառուցման նպատակն էր նախկինի համեմատ նոր դոմնայի հիմքը ավելի բարձր դնել, որպեսզի գարնանային ջրերը առաջվա պես չողողեն այն և պատճառ չդառնան դոմնայի երկարատև կանգառումներին։ Այդ նույն նպատակով դոմնային փայտատան շուրջը պետք է հողաթումբ բարձրացվեր[25]։

Այնուհետև Անտյուֆեևը պետք է հիմնովին վերանորոգեր արդեն խարխլված փայտաշեն ֆաբրիկաները, վերափոխեր դոմնային և ձուլող անիվները, որոնք գործում էին ջրի ուժով։

Յակով Մակարովիչը հատուկ ուշադրություն պետք է դարձներ փայտածխի պատրաստման վրա, որը ամենացավոտ հարցերից մեկն էր։ Այն կապված էր անտառային պաշարների խելացի օգտագործման հետ և փայտի լավագույն այրման դեպքում ստացված ածուխը կլիներ ավելի շատ և ավելի բարձրորակի։ Բայց այստեղ ամեն ինչ չէր, որ կարգին էր։

---

20 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 22, л. 61 об.
21 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 21, л. 18 об.
22 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 22, лл: 43—44.
23 Տե՛ս ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 27.
24 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 32, л. 25 об.
25 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 21, л. 72.

Այդ ժամանակաշրջանում գյուղում շերտավորումն արդեն այն աստիճանի էր հասել, որ փաստորեն հարուստ գյուղացիները գործարանային աշխատանքներին անձամբ իրենք չէին մասնակցում, այլ իրենց փոխարեն վարձում էին աղքատ գյուղացիներին, որոնք և առաջինների փոխարեն պետք է կատարեին աշխատանքային պարհակները։

«Փայտակույտերի պատրաստման և այրման համար դուք իմ վոտչինաներից գյուղացիներ եք ուղարկում,—գրում էր 1780 թ. մայիսի 25-ին Հովհաննես Լազարյանը իր հավատարմատարներ Օհանջանովին և Իպանովին,—բայց նրանցից հարուստները կամ ծույլերը իրենց փոխարեն վարձում և ուղարկում են ուրիշների, որոնք հոգ չեն տանում ավելացնելու ստացվելիք փայտածխի քանակը, այլ աշխատում են մի կերպ արագորեն վերջացնել այրման աշխատանքները և ստանալ ըստ պայմանագրի իրենց հասանելիք փողերը. սակայն ածուխը պակաս ստանալու համար նրանցից ոչինչ չի բռնագանձվում, իսկ այն անձանցից, որոնց վրա գրված են տվյալ կույտերը, բռնագանձվում է միայն 3-ական կոպեկ յուրաքանչյուր արկղից ոչ-լրիվ այրման համար։ Դրանից ինձ բացահայտ վնաս է հասնում և ես զուր տեղը կորցնում եմ բազմաթիվ անտառներ»[26]։

Այդ երևույթներին վերջ տալու նպատակով Լազարյանը առաջարկում էր յուրաքանչյուր փայտատեսակի փորձնական այրումներ կատարել, ըստ այդմ սահմանել նորմաներ և համաձայն այդ նորմաների գյուղացիներին կարգադրել պատրաստել փայտածուխ։ Նորմաները չկատարելու դեպքում ոչ միայն անմիջականորեն տվյալ գյուղացուց էին բռնագանձելու վնասի արժեքը, այլև վերահսկիչներից, որոնք նման դեպքերում համարվում էին իրենց պարտականությունների կատարման մեջ թերացած[27]։

Փայտածխի որակով պատրաստումը ապահովելու նպատակով արդեն այդ տարիներին, այսինքն գործարանը ձեռք բերելու առաջին տարիներին, Լազարյանը մտադիր էր կառուցել փայտածխի պատրաստման հատուկ վառարաններ։ Նման դեպքում գյուղացիները ազատվելու էին փայտածխի ստացման պարտականություններից, որոնք սահմանափակվելու էին միայն անտառահատման և ծառաբների տեղափոխման աշխատանքներով[28]։ Դեռ ավելին։ Նա մտադիր էր անտառային լավագույն զանգվածներում, որտեղ նաև հացահատիկի ցանքսի համար հարմար վարելահողեր կլինեին, վերաբնակեցնել 30 և ավելի գյուղացիական տնտեսություններ, 5—6 տարով ազատել նրանց բահրայի վճարումից և գործարանների ու աղահանքերի գծով կատարվող աշխատանքներից, իսկ հարկ եղած դեպքում նաև ավելի ժամանակով, որպեսզի այդ տնտեսությունները հիմնավորվեն նոր վայրերում, որից հետո միայն օգտագործել նրանց անտառահատման և ծառաբների տեղափոխման աշխատանքներում[29]։

Իսկ մինչ այդ, փայտը լրիվ չայրելու համար, նա կարգադրում էր բռնագանձել յուրաքանչյուր պակասած արկղի լրիվ արժեքը, ընդ որում փայտածուխ պատրաստող վարպետից յուրաքանչյուր պակասած արկղի դիմաց պետք է բռնագանձվեր 5-ական կոպեկ, իսկ արժեքի մնացյալ մասը պետք է վճարեին

26 ЦГИАЛ, ф. 880, оп. 1, д. 21, л. 87 об.
27 Նույն տեղում, л. 91 об.—92.
28 ЦГИАЛ, ф. 880, оп. 1, д. 21, л. 94 об.
29 Նույն տեղում, л. 95. об.

տվյալ փայտակույտերին կոված գյուղացիները[30]։ Եվ ընդհակառակը, գյուղացիներին շահագրգռելու համար նա կարգադրում էր յուրաքանչյուր ավելի ստացված արկղի դիմաց նաղդ դրամով վճարել նրանց 5-ական կոպեկ։ Այդ մասին պետք է հայտարարեին բոլոր գյուղերում, որպեսզի ամեն մի գյուղացի իմանար այդ մասին[31]։ Եթե Դեմիդովների և Տվերդիշևի գյուղացիները յուրաքանչյուր 20 սաժենանոց կեչու փայտակույտից ստանում էին 80 արկղ փայտածուխ, իսկ նույնքան եղևնու փայտակույտից՝ 70 արկղ, ապա Հովհաննես Լազարյանը հայտնում էր, որ ինքը ուրախ կլինի, եթե սկզբնական շրջանում իր գյուղացիները համապատասխանաբար 70 և 60-ական արկղ փայտածուխ ստանան[2]։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ գյուղացիների արտատնտեսական շահագործմանը զուգընթաց սկսվում էր նաև նրանց տնտեսական շահագործումը։ Նյութական օգուտի և վնասի գիտակցությունն էր, որ գյուղացիներին պիտի ստիպեր կատարելու որակյալ աշխատանք և ոչ թե ֆեոդալական հարկադրանքը։

Մինչև XVIII դարի ութսունական թվականները Ջերմոսի գործարանում արտադրվում էր միայն ձուլածո կոփված երկաթ, շերտավոր երկաթ և այսպես կոչված քառակուսի երկաթ։ Անտյուֆեևը պետք է հոգ տաներ, որպեսզի արտադրվի նաև թիթեղ, հատված երկաթ և այլն։

1782 թ. օգոստոսի 23-ին Անտյուֆեևի կողմից գործի դցվեց առաջին գլանամեքենան, թիթեղ պատրաստելու համար, որը արտադրում էր մեկ քառակուսի արշին մեծությամբ տանիքի թիթեղներ՝ 10 ֆունտ ծանրությամբ[33]։

Նոր դոմնան գործարկվեց 1781 թ. նոյեմբերի 12-ին։ Սակայն, գոյություն ունեցող երկու դոմնաները միաժամանակ հնարավոր չեղավ աշխատեցնել, քանի որ երկաթահանքով բավարարելը չափազանց բարդ հարց էր։ Երկու դոմնաների միաժամանակ գործելու դեպքում երկաթահանքի հանույթը մեկ և կեսից երկու անգամ պետք էր ավելացնել, ինչ որ հնարավոր չէր փոխադրական միջոցների տվյալ ժամանակի պայմաններում։ Բացի այդ, Կիզելի հանքավայրում աշխատում էին ընդամենը 62 բանվորներ, որոնք հազիվ թե ի վիճակի լինեին արտադրական տեխնիկայի բացակայության պայմաններում մոտ երկու անգամ բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը։

Հովհաննես Լազարյանը սկզբից ևեթ ծրագրել էր նոր դոմնա և գործարան կառուցել, բայց այս անգամ հանքերին ավելի մոտ վայրում, որպեսզի փոխադրման հետ կապված դժվարությունների վերացման ճանապարհով ընդլայնվեր արտադրվող երկաթի քանակը[34]։ Ուստի հավատարմատարներին հանձնարարվեց ուսումնասիրել Կիզելի երկաթահանքերին մոտիկ գտնվող տեղանքը և ջրամբարտակի ու դոմնայի կառուցման համար հարմար վայր ընտրել։ Որպեսզի հետագայում որևէ մեկի կողմից (այստեղ, իհարկե, Լազարյանը ի նկատի ուներ Վսևոլոժսկուն, որը նրա հետ մեկտեղ հանդիսանում էր Կիզելի հանքերի սեփականատերը—Վ. Դ.) արգելքներ չհարուցվեին, Լազարյանը կարգադրում էր ընտրված վայրից նախապես գյուղացիներ վերաբնա-

30 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 55, л. 5.
31 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 47, лл: 46—47.
32 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 47, лл: 46—47.
33 Н. Н. Новокрещенных, նշված աշխատությունը, էջ 17։
34 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 21, л. 96 об.

կեցնել, յուրացնել այդ վայրը, որից հետո միայն հնարավոր կլիներ ձեռնամուխ լինել գործարանի շինարարությանը[35]։

Արդեն 1782 թ. հոկտեմբեր ամսին Հովհաննես Լազարյանը պահանջում էր իր հավատարմատարներից մանրամասն նկարագրել ջրամբարտակի կառուցման համար Լիտվա գետի վրա ընտրված երկու տեղերը, թե ո՞րն է դրանցից ավելի հարմար, որքան հնարավորության վրա է գտնվում Կիզելի երկաթահանքերից, ինչպի՞սի բնակավայրեր կան մոտակայքում, ի՞նչ անտառներ, ի՞նչ միջոցներով պետք է պատրաստվեն անհրաժեշտ շինանյութերը, հողագործությամբ զբաղվելու համար պիտանի հողեր կան թե ոչ, ինչպե՞ս պետք է կատարվի կառուցումը, անմիջականորեն գործարանի կառուցման վայրում գյուղացիների վերաբնակեցման միջոցով թե՞ գյուղացիական կարգախմբեր ուղարկելով և այլն[36]։

Սակայն ջրամբարտակի կառուցման վայրի որոնումները շարունակվում էին։ 1783 թ. հունվարի 20-ին Մոիսեյ Օհանջանովը հաղորդում է Լազարյանին, որ Կիզել գետի վրա ջրամբարտակ կառուցելու ավելի հարմար վայր է գտնվել՝ երկաթահանքերից ընդամենը երեք վերստ տարածության վրա, միայն թե գետը քարքարոտ է և ջրամբարտակի կառուցման ընթացքում կարող է դժվարություններ հարուցել[37]։

Այդ տեղը զուրկ էր ցանքսերի համար պիտանի հողերից և քանի որ շրջակայքում, շուրջ 30 վերստ տարածության վրա գրեթե ոչ մի բնակավայր չկար, ուստի չքանում էին գործարանի կառուցումը ազատավարձու բանվորների միջոցով իրագործելու հնարավորությունները, ինչպես որ մտադրվել էր նախապես Լազարյանը[38]։ Միակ ելքը մնում էր՝ կառուցել այն սեփական գյուղացիների ուժերով, մշտապես տվյալ վայրում գյուղացիներ վերաբնակեցնելով և կամ այնտեղ գյուղացիական կարգախումբ ուղարկելով։ Այս վերջին հանդամանքը ևս կապված էր մեծ բարդությունների հետ, քանի որ գործարանի կառուցման վայրը գտնվում էր կալվածքի ամենամարդաշատ գյուղերից այսպիսի մեծ հեռավորության վրա. Դմիտրիևսկոյե գյուղից՝ 153 վերստ, Ռոժդեստվենսկոյի գյուղից՝ 188 վերստ, Յուրիչևսկոյե գյուղից՝ 200 վերստ, Կիլասովսկոյե գյուղից՝ 133 վերստ, Ուստկոսվենսկոյե գյուղից՝ 113 վերստ և այլն[39]։

Շինարարական այդ նախագծերի իրագործման հետ էր հավանաբար կապված նաև 1784 թ. սկզբներին 16000 ռուբլով բարոնուհի Մարիա Արտեմենա Ստրոգանովայի կալվածքի գնումը, որը Լազարյանին բերում էր մոտ 4000 շունչ արական սեռի գյուղացիներ, իսկ նրա սեփականությունն հանդիսացող հողային տարածություններն ընդարձակում էր 250852 դեսյատին նոր հողերով։ Այսպիսով Հովհաննես Լազարյանը տեր էր դառնում 861850 դեսյատին հող ունեցող կալվածքի[40], 11097 արական սեռի ճորտ գյուղացիներով[41]։

Այդ նոր ձեռք բերված կալվածքում էր գտնվում Խոխլովոյի պղնձաձուլական գործարանը, ուր այդ ժամանակ երկաթ էր ձուլվում, քանի որ մոտակայ-

35 Նույն տեղում։
36 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 55, лл. 56—57.
37 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 61, л. 172.
38 Նույն տեղում, л. 95 об.
39 Տե՛ս ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 277.
40 ЦГИАЛ, ф. 1252, д. 1807, л. 20.
41 Տե՛ս ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 117.

քում տեղավորված պղնձի հանքերը սպառվել էին։ Այդ տեսակետից Խոխլովոյի գործարանը էական փոփոխություններ չէր կարող մտցնել տնտեսության մեջ և 1784 թ. արդեն սկսվեց Կիզելի գործարանի շինարարությունը։ Բայց այդ ժամանակ մահացավ 74-ամյա Յակով Մակարովիչ Անտյուֆեևը, իսկ քիչ անց նրա որդի Յակովը։

Հովհաննես Լազարյանը Ջերմոս ուղարկեց անգլիացի Իոսիֆ Սամուիլ Հիլլին, նրա հետ կնքելով հետևյալ համաձայնագիրը, որով Հիլլը պարտավորվում էր.

1) Ջերմոսի գործարանում բոլոր տեսակի երկաթների հատման և գլանման համար այնպիսի մեքենաներ կառուցել, որոնք շաբաթական մինչև հազար փութ երկաթ հատեին։

2) Պատրաստել մի գլան, որը հնարավորություն կտար շաբաթական մինչև 500 փութ թիթեղ և արշինանոց երկաթ արտադրել, ընդ որում տարեկան արտադրանքի քանակը պիտի կազմեր 40000 փութ հատված երկաթ և 25000 փութ թիթեղ։ Այդ նպատակով, հիշյալ երկաթատեսակների արտադրության համար պետք է կառուցվեր հատուկ ֆաբրիկա և գործողության մեջ դրվեր արդեն 1785 թ. կեսերին՝ կառուցման վրա կորցնելով ընդամենը մեկ տարի։

3) Հիլլը պետք է Լազարյանի բանվորներին սովորեցներ թուջից տնային ամանեղեն և տնային տնտեսության համար անհրաժեշտ այլ իրեր պատրաստել։ Նա պետք է սովորեցներ նաև կաղապարներ պատրաստելու եղանակները, այնպես որ բանվորները կարողանային շաբաթական 500 փութ թուջից զանազան տեսակի ամանեղեն պատրաստել։

4) Հիլլը պարտավորվում էր Լազարյանի «մարդկանց» սովորեցնել գործողության մեջ դնել և բանեցնել 1-ին կետում նշված մեքենաները։

5) Նա պարտավորվում էր նաև բարձրացնել արտադրվող թուջի հալման և երկաթի ձուլման որակը, ձուլման լավագույն մեթոդները սովորեցնել երկաթ ձուլող վարպետներին, հնարավորություն տալով այսպիսով նրանց շաբաթական արտադրանքը հասցնել 11 երկաթաձույլի, այնպես որ յուրաքանչյուր վարպետ կարողանար շաբաթական 10 կամ 11 երկաթաձույլ տալ խուսափելով ավելորդ խոտանից։

6) Բոլոր նրանց, ովքեր կառանձնացվեին հատուկ այդ նպատակի համար, սովորեցնել երկաթից լավագույն տեսակի պողպատի ստացման մեթոդները։

7) Հիլլը պարտավոր էր ինչպես գործարանային արտադրությունը, այնպես էլ գործարանի վարչությունը դնել լավագույն հիմքերի վրա։

Այս բոլոր միջոցառումների նպատակն էր ավելացնել երկաթի արտադրությունը և բարելավել արտադրանքի որակը[42]։

Այսպիսով, Հովհաննես Լազարյանը կամենում էր ընդարձակել արտադրությունը լայնությամբ և խորությամբ, ինչպես ձեռնարկությունների թիվն ավելացնելով, այնպես էլ բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը և կիրառելով նորագույն տեխնիկական միջոցներ։

Սակայն մինչև 1786 թ. կեսերը, երբ Հովհաննես Լազարյանի Պետերբուրգի գրասենյակի կառավարիչ Ֆ. Ն. Կանդալինցևը այցելեց Պերմի կալվածքները, թիթեղերկաթի ֆաբրիկան դեռևս պատրաստ չէր, գտնվում էր կառուցման պրո-

[42] ЦГИАЛ, ф. 880. оп. I, д. 84 л. 131.

գեսում և վերջինս հույս էր հայտնում, որ կառուցումը կավարտվի 1786 թ. ամռան ընթացքում[43]։

Այդ նույն ժամանակ Ջերմոսի գործարանում աղյուս էին պատրաստում փայտածխի ստացման վառարաններ կառուցելու համար[44]։

Նախքան Կիզելի դոմնային գործարանի շինարարության ձեռնարկելը, ինչպես վերևում տեսանք, երկյուղ էր հայտնվել, որ տվյալ շինարարությունը անբարյացակամորեն կարող է ընդունվել հարևան որոշ գործարանատերերի կողմից։ Եվ իսկապես։ Թեև կառավարող Սենատը Հովհ. Լազարյանին միայն 1785 թ. էր իրավունք տվել կառուցել գործարան, բայց շինարարական աշխատանքները սկսվել էին ավելի վաղ։ Իմանալով այդ մասին սենատոր Վ. Ա. Վսևոլոժսկին, որի և Լազարյանի համատեղ սեփականությունն էին հանդիսանում Կիզելի երկաթահանքերը, դիմեց սենատի 1-ին և 6-րդ դեպարտամենտներին, խնդրելով իրեն ևս թույլատրել կառուցել գործարան։ Սակայն այդ նշանակում էր Լազարյանի նախագծած գործարանը փաստորեն շարքից դուրս հանել, քանի որ Վսևոլոժսկու տիրույթները գտնվում էին ավելի բարձրադիր վայրերում, որտեղ ջրամբարտակի կառուցման հետևանքով Լազարյանի գործարանը ջրողող կլիներ։

Հովհաննես Լազարյանը իսկույն դիմեց իր ազդեցիկ հովանավորողներից իշխան Ալեքսանդր Վյազեմսկուն, որն իր հերթին միջնորդեց սենատում «հոգատար և ուշադիր վերաբերմունք ցույց տալ գործի նկատմամբ»[45]։

Պայքարը Վսևոլոժսկու և Լազարյանի միջև տևեց տարիներ և, ի վերջո, այստեղ հաղթող դուրս եկավ Լազարյանը՝ շնորհիվ իր հարստության, կապերի և ազդեցիկ հովանավորողների։

Անտարբեր չէին այս հարցում նաև Ստրոգանովները, որոնց հավատարմատարները, նրանց իսկ դրդմամբ, դիմել էին նահանգական գրասենյակ, որպեսզի արգելեն Կիզելի գործարանի կառուցումը։ Այդ նույն հարցով իշխան Մ. Մ. Գոլիցինի հավատարմատարը դիմել էր տեղական պետական պալատ։ Սակայն բոլոր պատասխաններն էլ մեկ էր եղել, որ կառուցումը արգելել չեն կարող, քանի որ այն կատարվում է սենատից տրված թույլտվության համաձայն[46]։

Ըստ երևույթին մենք այստեղ գործ ունենք հետզհետե նշմարվող մրցակցության տենդենցի հետ, որն արտահայտվում էր արտադրանքը ընդարձակելու իր հարևանի ձգտումը խորտակելու մեջ, առավել ևս այն բանի համար, որ, ինչպես վկայում է Ֆ. Ն. Կանդալինցևի՝ Հովհաննես Լազարյանին գրած նամակը (19 հունիսի 1786 թ.), հարևան գործարանատերերի գյուղացիները որպես ազատավարձու բանվորներ գալիս էին աշխատելու Կիզելի շինարարության վրա[47]։

Արդեն 1786 թ. գարնանը Կիզելի գործարանի շինարարության վրա աշխատում էին մոտ 300 գյուղացիներ, որոնցից 30—40 հոգի անձրևների հետե-

---

43 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 101, л. 47 об.

44 Նույն տեղում, л. 48.

45 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 88, лл: 94—95.

46 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 101, л. 48.

47 Նույն տեղում, л. 48 об.

վանքով ստեղծված օդի խոնավությունից և օդափոխությունից հիվանդացել էին և սոսկալի վիճակում էին գտնվում[48]։

Այդ ժամանակ արդեն սկսել էին ցցեր խփել և դոմնայի հիմքը գցել։ Կանդալինցևը մեծ հույս էր հայտնում, որ 1786 թ. աշնանն արդեն դոմնաները պատրաստ կլինեն։ Միաժամանակ գյուղացիների համար տներ էին շինում։ Սակայն բոլոր արտադրական ձեռնարկություններում էլ բանվորական ձեռքերի մեծ պակաս էր զգացվում, ուստի Կանդալինցևը կարգադրել էր գարնանացանի աշխատանքներն ավարտելուց հետո կազմել գյուղացիական կարգախմբեր և ուղարկել Կիզելի աշխատանքներին մասնակցելու։ Բայց հնարավոր եղավ հավաքել միայն շուրջ 350 հոգի, որոնք և հունիսի 10—15-ին մետաղագուղձերի համար պետք է խրամատներ փորեին։ Սակայն ամառային գյուղատնտեսական աշխատանքներն արգելք էին հանդիսանում գործարանի կառուցմանը մեծ լիցք հաղորդելուն և միայն օգոստոսի 15-ից հնարավոր եղավ հետիոտն և ձիավոր 1000—1500 գյուղացիներ ուղարկել աշխատելու Կիզելի գործարանի շինարարության վրա[49]։

Այսուհանդերձ 1786 թ. Կիզելի դոմնայի կառուցումը չավարտվեց։ 1787 թ. մայիս ամսին ևս 322 հոգի «սեփական» և ազատավարձու գյուղացիներ զբաղված էին շինարարական աշխատանքներով, իսկ նույն թվականի հունիս ամսին գյուղերից ուղարկված լրացուցիչ կարգախմբերի հետ միասին շինարարության մեջ ընդգրկված բանվորների թիվը կազմում էր 843 հոգի, որոնցից 261-ը ձիեր ունեին, իսկ մնացածները հետիոտն էին։ Սրանք միաժամանակ զբաղված էին նաև անտառահատման աշխատանքներով։

Շինարարության ավարտի ձգձգվելը խոսում էր այն մասին, որ գյուղացիական կարգախմբերի միջոցով այն վախճանին հասցնելը երկար ժամանակ էր պահանջում։ Բացի դրանից, գործարանի կառուցումը վերջացնելուց հետո այստեղ հարկավոր էր ունենալ մշտապես տեղում ապրող և գործող ինչպես որակյալ բանվորական ուժ, այնպես էլ սեպագործ բանվորներ։ Այդ հարցի լուծման միակ ելքը Կիզելը բնակիչներով ապահովելն էր, այսինքն գյուղացիների վերաբնակեցումը նորակառույց գործարանի մերձակայքում։ Գյուղացիները դժկամությամբ էին համաձայնվում վերաբնակվել։ Առաջին հերթին փոխադրում էին երիտասարդ և ֆիզիկապես առողջ գյուղացիներին, որոնց թիվը առանձնապես մեծ չէր, որովհետև հարուստ գյուղացիները խուսափում էին վերաբնակեցումից, իսկ գործակատարները այդ նույն հարուստ գյուղացիների ցուցումով վերաբնակեցնում էին տնտեսապես հյուծված տարրերին, ինչպես նաև այն կիրառում էին որպես պատժի միջոց։

Այդ առթիվ Մ. Օհանջանովը և Յա. Իպանովը 1792 թ. Հովհաննես Լաղարյանին գրում են. «Կիզելի գործարան վերաբնակեցվածներից ոչ բոլորն են այնպիսիք, ինչպես բացատրել են ձերդ բարեծնությանը, որ իբր նրանք բոլորը աղքատ գյուղացիներ են և վերաբնակեցումը որպես պատիժ է ծառայում նրանց. թեև նմաններր կան նրանց թվում, բայց դրանից խուսափել չի լինի... վերաբնակեցվածներից շատերը լավերից են»[50]։ Բայց քիչ անց, հերքելով իրենց իսկ նախորդ խոսքերը, հավատարմատարները գրում էին. «Եթե այնտեղ վերաբնակեցնենք լավագույն (իմա հարուստ—Վ. Դ.) գյուղացիներին, ապա տեղի

48 Նույն տեղում, լ. 51.

49 ЦГИАЛ. ф. 880, оп. 1, д. 101, л. 51 об.

50 ЦГИАЛ, ф. 880, оп. 1, д. 156, л. 187.

պայմանները անտանելի կթվան նրանց, կվիրավորվեն և կսկսեն նվնվալ ու ոչ մի կերպ իրենց կարգի բերել չեն կարողանա, քանի որ վարելահողեր չեն ունենա...»[51]։

Պարզ է, որ Կիզել վերաբնակեցված գյուղացիները ունեզրկվում էին, վերածվում փաստական պրոլետարների, քանի որ կտրվում էին նրանց բոլոր կապերը հողի հետ և զուրկ լինելով արտադրամիջոցներից, նրանք իրենց գոյությունը պետք է քարշ տային սոսկ բանվորական ուժի վաճառքի հաշվին։

Գյուղացիները Կիզել վերաբնակեցվում էին առանձին-առանձին ընտանիքներով, թեև, ըստ նախնական հաշվումների, անհրաժեշտ էր տեղափոխել 600 ընտանիք[52]։ Վերաբնակեցման նման եղանակը, միայն մի նպատակ էր հետապնդում, այն է՝ առիթ չտալ գյուղացիական զանգվածային դժգոհության, առավել ևս հուզումների։ Մինչև 1790 թ. Կիզելում վերաբնակվել էին 335 տղամարդ և 311 կին[53]։ Վերաբնակեցումը շարունակվում էր նաև հաջորդ երկու տասնամյակներում և հիմնականում ավարտվեց 1805 թվականին։

Կիզելի գործարանի կառուցումը ավարտվեց 1789 թ., երբ հունվարի 10-ին գործի գցվեց առաջին դոմնան։ Երկրորդ դոմնան սկսեց գործել 1790 թ. հունիսի 23-ից, իսկ երկաթի ձուլումը սկիզբ առավ 1790 թ. ապրիլ ամսից[54]։

Կիզելի գործարանի կառուցումը սկսելու հետ մեկտեղ Հովհաննես Լազարյանը մտադրվեց կառուցել նոր գործարան, այս անգամ Պոլազնա գետի վրա։ Իմանալով Լազարյանի այդ նոր մտահղացման մասին, որը նա մտադիր էր կենսագործել XVIII դարի 90-ական թվականներին, Կիզելի գործարանի կառուցման ավարտից հետո, հավատարմատար Իպանովը իսկույն բացասական դիրք գրավեց հետևյալ պատճառաբանությամբ. «...ինչ վերաբերում է նոր շինարարությանը՝ Պոլազնա գետի վրա գործարանի կառուցմանը, ապա ամենախոնարհ կերպով համարձակվում եմ զեկուցել առաջինը այն, որ Կիզելի գործարանը դեռևս կատարելության չէ հասցված, Չերմոսի գործարանում դոմնայի տեղը ֆարրիկան ոչ միայն չի կառուցվել, այլ դոմնան գործելու պատճառով չի քանդվել, իսկ այդ բոլորը լիովին պետք է գլուխ բերել։ Բայց քանի որ հիմա, պատերազմական ժամանակների բերումով, ամեն տարի հսկա թվով ռեկրուտներ են վերցնում, որի հետևանքով աշխատանքներում մեծ խառնաշփոթություն է առաջ գալիս, եթե ձեռնամուխ լինենք Պոլազնայի վրա նոր գործարանի կառուցմանը, թեկուզ և այն կառուցելու լինենք ազատավարձու մարդկանց միջոցով, բայց և այնպես հետագայում անհրաժեշտ կլինի գործի դնել մեր մարդկանց միջոցով, որոնք չեն կարող խուսափել դժվարություններից, իսկ դրանով քայքայումից նրանք զերծ չեն մնա...»[55]։

Պոլազնինոյի գործարանը միայն երկաթաձուլական էր, որտեղ երկաթ ձուլելու համար անհրաժեշտ թուջը բերվում էր Կիզելի և Չերմոսի գործարաններից։ Այդ իսկ պատճառով էլ սրա շինարարությունը բավական արագ կատարվեց։ Այն ուներ 8 հնոց և արտադրում էր միայն շերտավոր երկաթ։

---

51 Նույն տեղում։

52 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 83, л. 26 об.

53 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 133, л. 369.

54 С. Г. Струмилин, նշված աշխատությունը, էջ 494. նույնպես՝ Пермское горнозаводское имение ея сиятельства княгини Е. Х. Абамелик-Лазаревой, Казань, 1890 г., стр. 5.

55 ЦГИАЛ, ф. 880, оп. I, д. 135, л. 153.

Բայց նոր գործարանների կառուցման հետ միաժամանակ ծագում էր մի այլ բարդ հարց։ Դա գործարանները որակյալ բանվորներով ապահովելու հարցն էր։ Կրկին կալվածքի ճորտ գյուղացիությունն էր, որ պետք է տար բանվորական անհրաժեշտ կադրեր։ 1784 թ., ձեռք զարկելով Կիզելի դոմնային գործարանի կառուցմանը Հովհաննես Լազարյանը միաժամանակ կարգադրեց ընտրել 150 երիտասարդ գյուղացիներ և տեղափոխել նրանց Ջերմոսի գործարան, որպեսզի այստեղ նրանք լավագույն ձուլող և դոմնային վարպետների մոտ սովորեն այդ գործը[56]։ Ընտրվում են 17—25 տարեկան ֆիզիկապես առողջ երիտասարդներ, որոնք և ուղարկվում են գործարանները։

Այսպիսով, Ջերմոսի գործարանն էր մյուս նորակառույց գործարաններին անհրաժեշտ բանվորական ուժ մատակարարում։

Ապրանքային արտադրության ընդլայնումը Լազարյանի կողմից օժանդակեց գյուղում շերտավորման խորացմանը։ 90-ական թվականներին Ջերմոսի գործարանի կառավարիչ Գ. Շչերբակովը գրում էր, որ շատ աղքատ գյուղացիներ իրենց խոտհարքները գրավ են դնում հարուստ գյուղացիների մոտ և դրանով իսկ զրկվում այդ խոտհարքներից[57]։ Մյուս կողմից՝ գործարաններում գործակատարներից շատերը, ինչպես և վարպետների մի մասը բավական խոշոր վարելահողեր ունեին[58]։ Առաջին դեպքում գյուղացիները ձիազրկվում էին և ի վիճակի չէին գործարանային աշխատանքներին մասնակցելու, իսկ երկրորդ դեպքում գործակատարները բանվորներին կտրում էին արտադրությունից և ստիպում մշակել իրենց վարելահողերը։ Երկու դեպքում էլ տուժում էր գործարանային արտադրությունը։ Այդ պատճառով էլ, եթե առաջին դեպքում Լազարյանը կարգադրում էր ամեն կերպ արգելակել գյուղացիների ունեզրկման պրոցեսը, որովհետև ֆեոդալիզմի՝ Ուրալում ստեղծած յուրահատուկ գործարանային արտադրության պայմաններում, հարկավոր էին գոնե այնպիսի գյուղացիներ, որոնք ունեին մեկ ձի, իսկ երկրորդ դեպքում գործակատարներին և բանվորներին արգելում էր գործարաններին կից հողագործությամբ զբաղվել։ Այսպիսի զիգզագներով էր ընթանում կապիտալիզմի զարգացումն Ուրալում։

Հովհաննես Լազարյանի լեռնարդյունաբերության ասպարեզ ոտք դնելը վկայությունն էր այն բանի, որ հայ վաճառականական կապիտալի որոշ ներկայացուցիչների մոտ կապիտալի կուտակումը խոշոր չափերի էր հասել։

Հովհաննես Լազարյանի, որպես արդյունաբերողի, գործունեությունը ցույց է տալիս, որ նրա ջանքերն ուղղված էին միմիայն ապրանքային արտադրությունն ընդարձակելուն և նրա որոշ գործողություններ իրենց վրա կրում էին կապիտալիզմի զարգացման տենդենցները, որոնք առկա ֆեոդալական հասարակարգի ստեղծած պայմաններում արտահայտվում էին թույլ կերպով։

Այդ գործողությունները վկայում են, որ Լազարյանը, գուցե և բնազդորեն, ձգտումն ուներ դեպի արտադրության այնպիսի կառուցվածք, որտեղ բոլոր պայմանները ստեղծված կլինեին ապրանքային արտադրությունը մեծ մասշտաբներով իրագործելու համար, մի հանգամանք, որ չէր կարող իր կնիքը չդնել նրա քաղաքական ու մշակութային հայացքների վրա։

---

56 ЦГИАЛ, ф. 880, оп. 1, д. 73, л. 177 об.
57 ЦГИАЛ, ф. 880, оп. 1, д. 183, л. 40 об.—41.
58 ЦГИАЛ, ф. 880, оп. 1, д. 168, лл. 53—54.